ՀՏԴ 82(092)

Հ.Լ. ԶՈՐՅԱՆ

ՈՒՇԱԳՐԱՎ ՓԱՍՏ ԳՐՈՂ ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆԻ ԿՅԱՆՔԻՑ

Ներկայացվում է գրող Ստ. Զորյանի կենսագրությունից մի փաստ, որը մինչ այժմ որևէ տեղ չի հրապարակվել և պահպանվել է միայն նրա եղբոր՝ Վ. Առաքելյանի հուշերում: Փաստը վերաբերում է Ղարաքիլիսայում երկդասյա դպրոցն ավարտելուց հետո Թիֆլիսում երկու տարի արհեստ սովորելու իրողությանը:

Առանցքային բառեր. հուշագրություն, կենսագրություն, փաստ, ընտանիք, վարսավիրություն, կրթություն:

Ներածություն: Հուշագրությունը՝ որպես գրական ժանր, հայտնի է դեռևս անտիկ գրականությունից: Հայտնի են հուշագրության մի քանի տեսակներ: Ընթերցողների համար հետաքրքիր են հատկապես այս կամ այն գործչի կամ ստեղծագործողի ընտանիքի անդամների, հարազատների, բարեկամների հուշերը: Այդպիսի հուշագրությունն ընթերցողին այլ տեսանկյունից է ներկայացնում մարդուն: Ընտանիքի անդամների, հարազատների հետ շփման մասին վավերագրերը պարունակում են փաստեր և հանգամանքներ, որոնք տվյալ մարդու կենդանության օրոք և հետագայում պաշտոնական կենսագրության մեջ չեն ներառվել: Յուրաքանչյուր նոր փաստ կամ հանգամանք կարևոր լրացում է տվյալ անձի կերպարին՝ նրա ստեղծագործությունն ավելի լավ հասկանալու համար: Այդպիսի հուշագրությունը պարունակում է զանազան փաստեր նաև այլ մարդկանց մասին, ում հետ հարաբերվել է տվյալ գործիչը: Այսինքն՝ փաստական լրացումները ոչ միայն տվյալ մարդու, այլև ուրիշների կենսագրությանն են վերաբերում:

Հայ իրականության մեջ կան ստեղծագործողներ, որոնց մասին հուշերն ամփոփված են գրքերում (Աբովյան, Թումանյան և այլք): Եվ կան ստեղծագործողներ, որոնց մասին չկան համահավաք հրատարակված հուշեր: Դրանք կա՛մ անտիպ են, կա՛մ էլ ցրված են տարբեր ամսագրերում և գրքերում:

Այսպես է գրող Ստեփան Զորյանի դեպքում: Նրա մասին հուշերի առանձին գիրք առայսօր հրատարակված չէ: Եթե այդպիսի հրատարակություն լինի, ապա այն, ըստ մեզ, պետք է սկսվի նրա եղբոր և քրոջ հուշերով, որոնք Զորյան մարդու մասին են և փոխլրացնում են իրար:

Զորյանի եղբոր անտիպ հուշերը: Զորյանն իր «Ինքնակենսագրական նոթերում» գրում է. «Ծնվել եմ գյուղացու նահապետական ընտանիքում, ուր կային հայկական հաստատուն տրադիցիաներ, սովորույթներ, ուր կրոնական ու

ժողովրդական տոները, ծեսերը կատարվում էին ճշտապահությամբ ու մեծ շուքով» [1]:

Ընդամենն այս մեկ նախադասությունն է գրել Զորյանն իր ընտանիքի մասին: Թե ինչպիսին էր այդ ընտանիքի նիստուկացը, ովքեր էին ծնողները, տատն ու պապը, ինչ երեխաներ կային ընտանիքում, իսկ այլ մանրամասներ չկան այդտեղ: Սա, մեծ վերապահությամբ, լրացվում է նրա «Մի կյանքի պատմություն» ինքնակենսագրական վեպում [2]:

Իր կրթության մասին Զորյանը գրում է. «Առաջին գրագիտությունը՝ այբուբենը, սովորեցրել է ինձ տատս, ապա մայրս այն չափով, որ ես կարող էի գրել իմ և մեր տնեցիների, մեր կովերի և եզների անունները: Այնուհետև, երբ յոթ տարեկան դարձա՝ հայրս տարավ ինձ մասնավոր դպրոց» [3]: Այստեղ նպատակահարմար ենք համարում կատարել լրացում Զորյանի եղբոր՝ Վաղինակ Առաքելյանի հուշերից. «Երբ դպրոց հաճախեց, առաջին դասարանից մինչև հունվար ամիսը փոխադրվեց երկրորդ դասարան, երկրորդից՝ տարվա վերջին՝ երրորդ դասարան» [3]:

Երկդասյա դպրոցն ավարտելուց հետո ցանկանում է ուսումը շարունակել: Դպրոցի տեսուչն առաջարկում է գնալ ուրիշ քաղաքում սովորել, բայց իմանալով, որ հայրը միջոցներ չունի ուրիշ տեղ ապրուստը հոգալու, առաջարկում է ուղարկել Վենետիկ՝ տեղի հայկական վարժարանում սովորելու: Սակայն մորապապը և տերտերը դեմ են լինում:

Անցնում է մեկ տարի, այդ ժամանակահատվածում նորից սովորում է դպրոցի ավարտական դասարանում, իսկ հետո գնում Թիֆլիս՝ Ներսիսյան դպրոցում քննություն տալու, բայց պարզվում է, որ ուշացել է: Ըստ Զորյանի՝ հաջորդ տարին ընդունվելու հույսով ինքը մնում է Թիֆլիսում:

Այստեղ կրկին մեջբերենք եղբոր հուշերից. «Երկդասյա դպրոցն ավարտելուց հետո ցանկանում էր ուսումը շարունակել, գնաց Թիֆլիս՝ Ներսիսյան դպրոցում քննություն տալու, բայց ուշացել էր, չէին ընդունել: Հետո եկավ տուն: Հայրս նրան դադար չէր տալիս, անընդհատ խոսում էր վրան, որ մի գործ կատարի, իր հասակի տղան անգործ չի մնա՝ ամոթ է: Հայրս նրան առաջարկեց գնալ Թիֆլիս՝ որպես վարսավիրի աշակերտ մտնել: Հայրս որ շատ նեղեց՝ համաձայնեց, ու մի գեղեցիկ օր հայրս տարավ Թիֆլիս, վարսավիրին տվավ աշակերտ ու եկավ: Մայրս շատ էր սիրում Ստեփանին, նա անդադար հորս վրա խոսում էր, որ՝ «էրեխուն տարար չոլերը գցեցիր»: Թիֆլիսում երկու տարի սովորեց վարսավիրանոցում: Վարսավիրանոցին մոտիկ մի գրականագետ մարդ է լինում, նա մեծ գրադարան է ունենում: Ստեփանը կարդում է այդ գրադարանի գրքերը:

Երկու տարին լրանալուց հետո հայրս գնաց Թիֆլիս իր որդուն բերելու, որդին արդեն վարսավիրություն սովորել էր: Բոլոր անհրաժեշտ պիտույքներն առնում են, գալիս Ղարաքիլիսա, գալիս մի խանութ են վարձում և սկսում վարսավիրություն անել: Այսպես շարունակվում է միայն երկու ամիս:

Մի օր գալիս է սափրվելու մի չինովնիկ: Սափրում վերջացնում է. այս մարդը սկսում է հայելում մտիկ տալ իր երեսին և սկսում է հայհոյել, գոռգոռալ, ապտակել Ստեփանին, որ նա լավ սափրել է, միայն բեղի մինը ծուռ է կտրել:

Այդ օրվանից ատելությամբ էր նայում չինովնիկներին:

Չնայած որ սովորել էր վարսավիրություն և խանութ էր բացել և լավ եկամուտ ուներ, բայց և այնպես իր սրտով չէր այդ գործը. նրա ուշը և միտքը գրականությունն էր, կարծես թե մի առիթ էր որոնում դրանից ազատվելու, և դա եղավ այդ միջադեպով՝ չինովնիկի բեղի մինը ծուռ էր կտրել և ապտակ կերել:

Վարսավիրանոցի ամբողջ իրերը՝ հայելին, սեղանը, աթոռները և այլ պարագաներ, բերեց լցրեց տուն և այլևս չզբաղվեց վարսավիրությամբ:

Վերջապես մի օր գնաց Թիֆլիս, «Մշակ» թերթի խմբագրատուն մտավ ծառայության սրբագրիչի պաշտոնով» [3]:

Կենսագրական հավելում՝ ըստ հուշի: Վարսավիրություն սովորելու մասին Զորյանը «Ինքնակենսագրական նոթերում» չի նշում, գուցե համարել է ոչ այնքան կարևոր: Այդ մասին չկա Զորյանի գրական գործունեությանն ուսումնասիրած գրականագետների՝ Հ.Մկրտչյանի, Խ.Սարգսյանի, Ս. Աղաբաբյանի աշխատություններում: Զորյանի կենսագրության մասին գրելիս նրանք հիմնվել են «Ինքնակենսագրական նոթերի» վրա:

Ս. Աղաբաբյանը Զորյանի տասներկուհատորյակի առաջաբանում գրում է [2], որ Զորյանը 1904 թվականին ավարտել է երկդասյա դպրոցը: Բայց երևի թյուրիմացաբար է այս թվականը նշվել: Եթե յոթ տարեկանում ՝ 1896 թվականին ընդունվել է դպրոց, ապա պետք է որ ավարտած լիներ 1898 թվականին: Մեկ տարի նորից սովորել է ավարտական դասարանում, երկու տարի էլ վարսավիրություն Թիֆլիսում: Այսինքն Զորյանը Թիֆլիսում սկսել է աշխատել 1901-1902 թթ.՝ 12-13 տարեկանից:

Վերը նշված կենսագրական փաստը հնարավորություն է տալիս կատարել որոշակի հստակեցում թվագրման հետ կապված:

Զորյանի եղբոր և քրոջ անտիպ հուշերը պարունակում են հետաքրքիր փաստեր նրա կյանքի վերաբերյալ, և դրանք կարող են մաս կազմել գրողի կենսագրության հստակեցման համար:

Եզրակացություն: Հուշագրությունները հաճախ անսպասելի, երբեմն գրականության պատմության տեսանկյունից կարևոր միջոց են խմբագրումներ

և սրբագրումներ կատարելու համար: Ստ. Զորյանի պարագայում այդպիսի հուշագրություն են դասականի եղբոր անտիպ ձեռագրերը, որոնց անհայտ լինելու պատճառով նրա կենսագրությունն ու ստեղծագործությունները հետազոտած գիտնականները ժամանակին հնարավորություն չեն ունեցել անդրադառնալու, գիտական շրջանառության մեջ դնելու և եզրակացություններ անելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Ստ. Զորյան.** Երկերի լիակատար ժողովածու 12 հատորով: Հ 1., Ե. 1977, էջ 3-24:
2. **Ստ. Զորյան.** Երկերի լիակատար ժողովածու 12 հատորով: Հ 1., Ե., 1977, էջ V-XXXIV:
3. **Վ. Առաքելյան.** Հուշեր իմ եղբոր մասին: Անտիպ:

Р.Л. ЗОРЬЯН

ИНТЕРЕСНЫЙ ФАКТ ИЗ ЖИЗНИ ПИСАТЕЛЯ СТЕПАНА ЗОРЬЯНА

Представлен факт из биографии писателя Ст. Зорьяна, который до сих пор нигде не публиковался, но сохранился в воспоминаниях его брата В. Аракеляна. В частности, упоминается о том, что после окончания двухлетней школы в Каракилисе Ст. Зорьян два года обучался ремеслу в Тифлисе.

Ключевые слова: мемуары, биография, факт, семья, парикмахерское дело, образование.

R.L. ZORYAN

AN INTERESTING FACT FROM THE LIFE OF THE WRITER STEPAN ZORYAN

An interesting fact from the life of the writer St. Zoryan is introduced which has not been published so far but has been kept in the memoirs of his brother V. Arakelyan. The fact is that after leaving the two-year school in Caraclice St. Zoryan was trained in a craft in Tiflis for 2 years.

Keywords: memoir, biography, fact, family, hairstyling, education.